

ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԿԻԶԲԸ

ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Արամ Ղանալանյանը սովետահայ մտավորականության այն ներկայացուցիչներից է, ով իր գիտական-բանասիրական գործունեության սկզբնական ժամանակներից, այսինքն՝ դեռ այն ժամանակվանից, երբ սովորում էր Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետում, մի կուռք ու պաշտամունք է ունեցել միայն. իր ժողովրդի բանահյուսության հավաքումն ու գիտական ուսումնասիրությունը: Նրա այս տարապայման հակումը դեռ իր ժամանակին նկատեց և անհրաժեշտ նպատակային ուղղության բերեց հայագիտության մեր մեծը՝ Մանուկ Աբեղյանը: Վերջինիս օգնությամբ ու շնորհիվ էր, որ Արամ Ղանալանյանը հայագիտության՝ այդ ամենին ոչ դյուրին բնագավառում սկսեց անել իր առաջին քայլերը, Աբեղյանի հսկողությամբ ու գիտական ղեկավարությամբ էր, որ երիտասարդ ֆուլկլորագետը գրեց իր առաջին ծավալուն մենագրությունը՝ «Հայ շինականի աշխատանքային երգերը» խորագրով (Երևան, 1937 թ.), որն ի դեպ, լայն ընդունելության ու դրվատանքի արժանանալուց բացի, եկավ ակնբախորեն մի կարևոր ճշմարտություն ապացուցելու, այն, որ Արամ Ղանալանյան ֆուլկլորագետը կայացել էր:

Այնուհետև դադար չունեի հայ ժողովրդական բանահյուսության մասնագետի գրիչը: Իրար հաջորդած մասնագիտական բնույթի ծանրակշիռ հոդվածների, մեծ ու փոքր մի շարք մենագրությունների, «Մասունցի Դավիթ» դյուցազնավեպի համահավաք բնագրի պատրաստման, հայ բանագիտության մեծերին (Գ.Սրվանձտյան, Մ. Աբեղյան) նվիրված շահեկան ուսումնասիրությունների օրինաչափ զարգացման հետևանքը հանդիսացավ գրական շուկայում 1969 թվականին հայտնված նոր և ըստ ամենայնի ուշագրավ աշխատությունը, որի վերնագիրը կազմված է մեկ բառից. «Ավանդապատում»: Իր աշխատության խնդիրներն ու նպատակներն էլ հեղինակը ձևակերպել է մեկ կարճառոտ նախադասությամբ միայն՝ «ի մի բերել տպագիր ու ձեռագիր աղբյուրներում եղած համապատասխան բոլոր նյութերը, խմբավորել դրանք ըստ տեսակների ու բովանդակության և տալ դրանց բազմակողմանի վերլուծությունը» (էջ Թ.): Այս է հեղինակի պլան-ծրագիրը, որն իր համար նախորոշել և որի իրականացման համար մոտ քսան տարվա չափ մի ժամանակաշրջան քրտնաթոր աշխատել է նա: Եվ բավական է քիչ ավելի մանրամասն քննել ընդամենը մեկ նախադասությունից բաղկացած գործողությունների վերոհիշյալ պլան-ծրագիրը, որպեսզի իսկույն ակնհայտ դառնա աշխատանքի այն վիթխարի

տարողությունը, որը պահանջվել է հեղինակից, իր «Ավանդապատումը» բավարար հաջողությամբ գլուխ բերելու համար:

«Ավանդապատումի» համար անհրաժեշտ ատաղձը հավաքելու նպատակով, հեղինակը նախ և առաջ պետք է ամենայն ուշադրությամբ կարդար մեր 1500 տարվա ամբողջ տպագիր գրականությունը՝ սկսած հինգերորդ դարի դասականներից, ընդհուպ մինչև մեր օրերը, մինչև Ակսել Բակունց ու Ստեփան Զորյան, Սերո Խանգաղյան ու Զարգանդ Դարյան, Խաչիկ Դաշտենց, Միսակին Բուրջի ու Պըլը-Պուղի: Վերջին անունները միանգամայն գիտակցաբար ենք բերում, որովհետև Ղանալանյանը մեկ կամ մի քանի ավանդություններ հանել է նաև նրանց ստեղծագործություններից: Նույնանման բծախնդրությամբ հեղինակը պետք է աչքի անցկացնեք տարբեր ժամանակներում ու աշխարհի տարբեր ծայրերում հրատարակված մեր հին ու նոր պարբերական մամուլը, որովհետև հանրահայտ է, որ Վենետիկի «Բազմավեպը», Զմյուռնիայի «Արշալույս արարատյանը», Կալկաթայի «Ազգասերն» ու «Ազգասեր արարատյանը» և մանավանդ «Բյուրակներ» տարբեր առիթներով, կամ հաճախ էլ առանց որևէ առիթի, իրենց էջերում հրատարակում էին զանազան բնույթի մեծ ու փոքր ավանդություններ: Եթե ասենք միայն, որ «Ավանդապատումում» հականե-հանվանե հիշատակված են 150-ից մի փոքր պակաս պարբերականների անուններ, այսինքն՝ հեղինակը տարիների իր փնտրտուքների ընթացքում թերթել է մինչև 150 անուն թերթ ու ամսագիր՝ իր որոնելիքները գտնելու համար, ապա համապատասխան մեկնաբանություններն արդեն ավելորդ կլինեն: Եվ եթե ավելացնենք կենդանի աղբյուրները, այսինքն՝ բանասացները, որոնց ականջալուր լինելով գրի է առել իր ավանդությունների մի մասը գիտնականը, իսկ այդ բանասացների թիվը հարյուրների է հասնում, եթե ավելացնենք նաև ձեռագիր աղբյուրները, որոնք գտնվում են Հայաստանի ու Միության ամենատարբեր արխիվներում ու տարբեր գործիչների անձնական ֆոնդերում, որոնք հեղինակը մեկ առ մեկ կարդացել է՝ իր համար անհրաժեշտ նյութերը դուրս գրելու համար, եթե վերջապես, այս բոլորին ավելացնենք մի քանի հազար ծրարի հասնող ընդարձակ նամակագրությունը, որը վարում էր Ղանալանյանը աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի՝ ամենատարբեր մակարդակ ու զբաղմունք ունեցող ներկայացուցիչների հետ, խնդրելով հաղորդել այս կամ այն ավանդությունը կամ ճշտել տվյալ ավանդության տարբերակները, կամ բանասիրական լրացուցիչ տվյալներ հաղորդել իր մոտ արդեն գտնվող այս կամ այն ավանդության վերաբերյալ և այլն, ապա գոնե ընդհանուր գծերով պարզ կդառնա այն վիթխարի աշխատանքի էությունը, որը կատարել է «Ավանդապատումի» հեղինակը:

Սակայն այս բոլորը, ինքնըստիներս մեծ աշխատանք լինելով հանդերձ, գործի մի մասն է, եթե կարելի է այսպես ասել, գործի բանասիրական-բանահավաքային մասը: Մկիզբն երկանցը սկսվում էր նյութերը ձեռքի տակ ունենալուց հետո միայն: Բնականոն ձևով ծագող հարցերից առաջինն ու հիմնականը կապվում էր հենց ավանդության՝ իբրև գրական-գիտական ժանրի բնութագրության հետ: Հանրահայտ է, որ եթե հայ ժողովուրդը իր գիտակցության մեջ կարողացել է որոշակիորեն տարբերակել ասենք՝ առակը, կամ հանելուկը, կամ հեքիաթը, ամեն մեկի համար ընկալման ինչ-որ սահմաններ ու հասկացողության ոլորտներ է մշակել, ապա նույնը ամենևին չի կարելի ասել ավանդության համար: Մինչև վերջերս էլ ավանդությունը իբրև գիտական ժանր մնում էր չտարբերողված և, հետևաբար, որպես այդպիսին հասարակայնորեն չգիտակցված: Բավական է ասել միայն, որ Մանուկ Աբեղյանի նման խորանիստ գիտնականն ու հիշյալ հարցերի ամենախոշոր ու նշանավոր գիտակը չէր ընդունում ու չէր տարբերակում ավանդությունները որպես ինքնուրույն գիտական ժանր, և այդ բնույթի բոլոր գործերը նույնացնում էր մերթ ժողովրդական առասպելների ու հեքիաթների, մերթ էլ զրույցների ու վիպասանական երգերի հետ: Արամ Ղանալանյանն, այսպիսով, պետք է սկսեր ամենասկզբից, այսինքն՝ նախ պետք է պարզեր, թե ինչ է հասկացվելու «ավանդություն» ասելով, այսինքն՝ պետք է տար ժողովրդական բանահյուսության մի ինքնուրույն բնագավառի գիտական սահմանումն ու բնութագիրը: Այս հարցի պատասխանը հստակեցնելուց հետո, պետք է ճշտորեն սահմանագծեր, թե որոնք են ավանդության՝ որպես ժանրի սահմանները, և բնականաբար, ինչպիսին է այդ ժանրի գիտական տարողունակությունը: Դրանից հետո պետք էր ճշգրտել, թե ավանդությունը ինչ տեղ ու դիրք ունի գրական մյուս ժանրերի, ասենք՝ հեքիաթի կամ առակի, կամ բանավոր արձակի շարքում և ինչ հարաբերության մեջ է նրանց համեմատությամբ: Մրանից հետո ծագում էր ուրիշ, ոչ պակաս կարևոր մի հարց. ինչպիսի՞ն է հայկական ավանդությունների տեղը մյուս ազգերի՝ համանման բնույթի գործերի շարքում, ունե՞ն արդյոք մտածողության ընդհանրություններ նրանց հետ թե ոչ, ի՞նչ ենք վերցրել և ինչու, և իր հերթին՝ նրանք ի՞նչ են վերցրել մեզնից, ի՞նչ քանակով և ի՞նչ սահմաններում: Ստիպողական անհրաժեշտություն էր ծագում, վերջապես, նյութը որևէ սկզբունքի համաձայն դաստիարակելու և ըստ այդմ ուսումնասիրելու տեսանկյունից, և այլն: Այսպիսի հարցադրումներ կարելի է շատ շարունակել, որոնք մի անգամ ևս գալիս են հավաստելու, որ հայկական գիտական ավանդապատումի ստեղծման աշխատանքները, որին ձեռնամուխ էր եղել Արամ Ղանալանյանը, ամենևին էլ չի կարելի հեշտ գործերի շարքը դասել: Բայց Ղանալանյանը կարողացել է անել անհնարինն ու անկարելին թվացողը, և ընթերցող ու գիտական հասարակայնության սեղանին է դրել իր

«Ավանդապատումը», մի աշխատություն, որն իրենով ազդարարում է հայ բանագիտության մի նոր, ավելի բարձր աստիճանի սկզբնավորումը մեզ մոտ և այն բարձրացնում է մի նոր, ավելի պատվավոր աստիճանի:

«Ավանդապատումի» արժեքի ու նշանակության մասին շատ կարելի է խոսել, սակայն կամենում ենք ուշադրություն հրավիրել հետևյալ՝ մեր կարծիքով ուշագրավ, հարցի վրա:

Դեռ Պատմահայր Խորենացին, անդրադառնալով այս կարգի ժողովրդական ստեղծագործություններին, կարողացավ կռահել և իրեն հատուկ համառոտաբան ոճով ձևակերպել նրանց մեկ կարևոր առանձնահատկությունը՝ ավանդություններն իրենց մեջ այլաբանաբար թաքցնում են ճշմարտությունը, իր լեզվով ասած՝ «Ճշմարտութիւն իրանցն այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ»: Արամ Ղանալանյանի գիրքը, այս տեսակետից, կարծես գալիս է լրացնելու ու հավաստելու Խորենացու միտքը: Գրքում առկա են բազմաթիվ ավանդություններ, որոնք, դեպքերի ու պայմանների բերումով, պարզվում է, որ ճշտապատում հենք են ունեցել: Օրինակ, գրախոսվող աշխատության 80-րդ էջում գետեղված է մի ավանդություն Սևանա լճի առաջանալու մասին: Պատմվում է, որ Սևանա լճի այժմյան տարածքում եղել է մեծ ու հինավուրց մի քաղաք, որն ունեցել է լեռնային մի աղբյուր, որի բերանը փակվելիս է եղել հատուկ կափարիչով: Երեկոյան երիտասարդ հարսերից մեկը ջրի գնալիս, անզգուշաբար մոռանում է փակել աղբյուրի բերանը: Ջուրը հոսում է, լցնում աղբյուրի ավազանը, բարձրանում, ծածկում է ամբողջ քաղաքը և այս կերպ էլ առաջանում է Սևանա լիճը:

Այս ավանդությունը գրի է առնվել 1957 թվականին, և բնականաբար, դիտվել է որպես հեքիաթախառն պատում, որը միայն ժպիտներ է հարուցում: Սակայն տարիներ անց, երբ Սևան-Հրազդան կասկադի կառուցման կապակցությամբ լճի մակերևույթն սկսեց իջնել, և երբ Լճաշեն գյուղի մոտ սկսեցին երևալ հանրահայտ դամբարանները, երբ հնէաբաններն ու պատմաբանները սկսեցին լրջորեն խոսել այդ վայրերում եղած հնամենի մի քաղաքի գոյության փաստի մասին, որը տեղում եղած բազմաթիվ աղբյուրների հորդացման հետևանքով անցել է ջրի տակ, – վերոհիշյալ ավանդությունն արդեն ներկայացավ այլ տեսանկյունով և սկսեց բոլորովին այլ կերպ ընկալվել: Սկսեց ընկալվել ոչ թե որպես հեքիաթ, այլ որպես ժողովրդական մի ստեղծագործություն, որն իր մեջ այլաբանաբար թաքցնում էր ճշմարտությունը:

Այստեղից էլ ծագում է օրակարգային մի խնդիր. քննել ավանդությունները արդի գիտության մակարդակով և արդի գիտության ընձեռած տվյալների հիման վրա, այդ ձևով

բացահայտել հայագիտության, պատմագիտության կամ մյուս գիտությունների պակասող օղակները, ամբողջացնել այդ պակասը այն տվյալներով, որոնք պահպանել են ավանդությունները և որոնք մեզ հայտնի մյուս աղբյուրները չեն պահպանել: Ղանալանյանի գիրքը թե անսահման հնարավորություններ է ընձեռում այդ անելու համար, և թե անսահման նյութ է տալիս այդպիսի գիտական քննություն սկսելու համար: Բերենք միայն մեկ օրինակ, թեև համապատասխան օրինակները գրքում բազմազան են:

Խոսքը վերաբերում է հանրահայտ «Քյալլագյոզների» կամ «Թափագյոզների» (բառացիորեն՝ «գլխաչքանիներ», «գլխին աչք ունեցողներ») մասին եղած ավանդությանը, որը բերված է «Ավանդապատումի» 36-37-րդ էջերում: «Ասում են, – պատմում է ավանդությունը, – թե թափագյոզը մի անգամ մարդ է բռնել, փակել այրի մեջ, որպեսզի քնի, վեր կենա և հետո ուտի նրան: Մարդը երկաթե շամփուրը տաքացրել է և խրելով թափագյոզի աչքի մեջ, կուրացրել է նրան: Հետո վրան է առել մի ոչխարի մորթի և խառնվելով ոչխարների հետ, մի կերպ դուրս է պրծել այրից»:

Ավանդությունը գրի է առնվել տիպիկ հայկական բնաշխարհի մի գավառում՝ Նոր Բայազետում, որտեղ բնակիչները ցույց էին տալիս նույնիսկ այն այրը, ուր, իբր, ապրել է թափագյոզը: Այրն առ այսօր այդպես էլ կոչվում է՝ «Թափագյոզի քարայր»: Թվում է՝ ամեն ինչ կարծես վկայում է այն մասին, որ ավանդությունը բնիկ տեղական ծագում ունի, ամեն դեպքում՝ հեռուն գնացող արմատներ չունի: Բայց անդրադառնանք Հումերոսի հանրահայտ «Ողիսականին», հիշենք այն դրվագը, երբ Ողիսեսին ու նրա ընկերներին, իրենց թափառումներից մեկի ժամանակ բռնում է հսկա ցիկլոպը, որն, ի դեպ, նույնպես մի աչք ուներ ճակատին: Հիշենք, որ Ողիսեսը ազատվելու համար շիկացած շամփուրով այրում է վիթխարի ցիկլոպի միակ աչքը և ապա, ինքն ու իր ընկերները թաքնվելով ոչխարների փորերի տակ, մի կերպ դուրս են պրծնում քարայրից: Հունական դիցաբանության և հայկական ավանդության միջև եղած նմանություններն այնքան ակնհայտ են ու բացորոշ, որ ակամայից հետաքրքրություն է առաջանում պրպտումներ կատարել այդ նմանությունների բանագիտական ակունքները պարզելու, նրանց միջև եղած ընդհանրությունները գիտականորեն հիմնավորել կարողանալու համար:

Նման բնույթի՝ է՛լ ավելի առատ նյութ է մատակարարում «Ավանդապատումը» հատկապես հայկական իրականության համար: Քննախույզ աչքը կարող է գտնել ոչ քիչ թվով ուշագրավ փաստեր ու տվյալներ, որոնք միտք են շարժում: Այստեղ էլ բավարարվենք միայն մեկ օրինակով:

Հանրահայտ ճշմարտություն է, և դա ինքը՝ հեղինակն էլ է նշում իր աշխատության առաջաբանում, որ ավանդություններ ստեղծվում են գերազանցապես այն պատմական անձնավորության կամ դեպքերի շուրջ, որոնք վճռական ու հիմնավոր դեր են ունեցել տվյալ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում: Այս տեսանկյունից դատելով՝ հասկանալի է ու ըմբռնելի, որ ավանդությունների՝ քանակական տեսակետից մեծ մասը պետք է վերաբերվի հայ ժողովրդի գլխով անցած այլևայլ պատերազմներին, կոտորածներին, գերևարումներին և այլն: Երկրորդ տեղը բռնում է ավանդությունների՝ Մեսրոպ Մաշտոց – գրերի գյուտ – Սահակ Պարթև խումբը: Այս էլ՝ կապված Մաշտոցի ու նրա արած մեծ գործի հետ, միանգամայն հասկանալի է ու մեկնելի: Երրորդ տեղում, սակայն, որքան էլ տարօրինակ թվա, գալիս են Գրիգոր Նարեկացու և նրա «Մատյան ողբերգության» պոեմի մասին եղած զանազան մեծ ու փոքր ավանդությունները. այն Գրիգոր Նարեկացու, որի մասին խոսելիս, պարբերաբար ասվել-կրկնվել է, որ նա ամենից քիչ ժողովրդականություն ունեցող անձնավորությունն է եղել, որ նրա պոեմը իր խրթին լեզվի ու պատկերա-մտածողական բարդ համակարգի պատճառով հայ գրականության ամենից ավելի քիչ կարդացվող գործերից է եղել: Մինչդեռ «Ավանդապատումում» եղած մեկից ավելի ավանդությունների՝ մեր բերած օրինակներն անգամ, բավական է անվերապահորեն պնդելու, թե Գրիգոր Նարեկացին, համենայն դեպս այն չի եղել, ինչպես մեծ մասամբ ներկայացվել է, և որ նրա Նարեկը շատ ավելի տարածված ու ընթացիկ ստեղծագործություն է եղել, քան իրականում ներկայացվում է:

Օրինակներ շատ կարելի է բերել, սակայն ասվածն էլ բավական է ցույց տալու համար, որ Արամ Ղանալանյանի «Ավանդապատումը» կարող է հաստատուն սկիզբ հանդիսանալ մեկից ավելի գիտական նորանոր ուսումնասիրությունների համար: Քիչ կան աշխատություններ, որոնք հիմք ու պատճառ կարող են հանդիսանալ այլ աշխատությունների գրվելու համար: «Ավանդապատումը» իր մեծ ընդգրկման, նյութի՝ ըստ խորության վերհանման, գրականագիտական-բանասիրական մասնագիտական վերլուծությունների ու ընդհանրացումների շնորհիվ կարողացել է բարձրանալ մինչև այդ մակարդակը, և իրենով ազդարարել նոր սկիզբը հայ բանագիտության մեջ: